



Մրցվող ֆինանսավորում է:  
Եվրոպական միության կողմից

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՎԷ ԼԵՐԴԴՐՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ՝ ՎԻՐՏՈՒԱԼ ՓՈԽՀՈՍՔԵՐԻ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԿՐՈՑԱՆՑԵՐԻ/ԷՆԵՐԳԵՏԻԿ  
ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՁևԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**Chatem House ձևաչափով անցկացված «Էներգետիկ կոոպերատիվների  
կիրառելիությունը Հայաստանում» խորագրով փորձագիտական հանդիպման-  
քննարկման արդյունքների վերլուծություն**

«ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման (EU4STED)» ծրագիրն իրականացվում է Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիան և այն պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

ք. Երևան, 2019



## ԿԼՈՐ ՄԵՂԱՆ

(առանց հղումների իրավունքի)

«Էներգետիկ կոոպերատիվների կիրառելիությունը Հայաստանում»

Անի Պլազա հյուրանոց «Դվին» սրահ

(ք. Երևան, Մայաթ Նովա 19, Անի պլազա հյուրանոց)

### Մասնակցում էին՝

Կլոր-սեղան քննարկմանը ներկա էին 22 մասնակից, որից 9 կին, 13-ը՝ տղամարդ: Մասնակից 8 ՔՀԿ-ներից 4-ը ղեկավարվում էր կնոջ կողմից, 4-ը՝ տղամարդկանց:

### Օրակարգային հարցեր՝

Կլոր-սեղան քննարկման օրակարգային հարցերն էին՝

1. Սեփական կարիքների նպատակով ՎԷ արտադրությունը՝ որպես համայնքների կայուն զարգացման երաշխիք
2. Վիրտուալ փոխհոսքերի կարգավորման առնչությամբ ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքները
3. Համայնքների ՎԷ կայանների փոխհոսքերի վիրտուալ կարգավորման խոչընդոտները և անհրաժեշտ կարգավորումները:

### Ելույթներ՝

Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակական կազմակերպությունների կոալիցիայի կառավարման խորհրդի նախագահ **Աստղինե Պասոյանը** ներկայացրեց վերականգնվող էներգիայի խթանմանն ուղղությամբ Հայաստանում մինչ օրս գործադրված ջանքերը: Տկն. Պասոյանն անդրադարձավ նաև օրենսդրական կարգավորման բացթողումներին և դրանց արդյունքում էներգախնայողության առջև ծառայած խնդիրներին: Տկն. Պասոյանը ներկայացրեց միկրոցանցերի բնույթն ու վերջիններիս սպառողական, համայնքային, վիրտուալ տեսակները: Անդրադառնալով վիրտուալ նեթ-միթերինգ՝ տկն. Պասոյանը նշեց, որ այն թույլ է տալիս համայնքներին տրամադրել արևային տեղակայանքի արտադրած էլեկտրաէներգիան տարբեր հասցեներում գործող համայնքային շենքերին և շինություններին, արտաքին լուսավորությունը սպասարկող համայնքային կազմակերպություններին և իրականացնել միասնական հաշվառում: Ներկայացնելով էներգետիկ կոոպերատիվների ձևավորման և աշխատանքի համաշխարհային փորձը՝ տկն. Պասոյանը կարևորեց էներգետիկ կոոպերատիվների դերը համայնքներում ՎԷ արտադրության խթանումը ապահովելու համար:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի Ֆինանսական վերլուծության վարչության պետի տեղակալ **Սևակ Բաբայանը** ներկայացրեց վիրտուալ փոխհոսքերի կարգավորման առնչությամբ ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքները: Պրն. Բաբայանն անդրադարձավ նաև հանձնաժողովի կողմից արձանագրված, նեթ-միթերինգի ներդրման հետ կապված համակարգային խնդիրներին:

### Քննարկումներ

Բանախոսների ելույթների առնչությամբ քննարկման մասնակիցները մի շարք տեսակետներ արտահայտեցին:

Արևային էլեկտրակայանների տեղադրումը որոշ դեպքերում պայմանավորված է միայն որակյալ հոսանք ունենալու ցանկությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամեն չորրորդ կվտ/ժ-ը մատակարարվում է որակական շեղումով:

Նախընտրելի է վիրտուալ նեթ-միթերինգի ներդրումը իրականացնել աստիճանաբար, պիլոտային ծրագրերի միջոցով: Սա թույլ կտա հասկանալ համակարգի արդյունավետության վրա ազդող գործոններն ու խոչընդոտները:

Նախկինում հողմային էներգիայի առքի սակագինը 46 դրամ էր, որը որոշ ժամանակ անց էներգետիկայի նախարարության կողմից իջեցվեց մինչև 23 դրամի: Նման հաշվարկը հայտնի հիմքերը չունի և մտահոգիչ է վերականգնվող էներգիայի արտադրության վրա ունեցած բացասական ազդեցության տեսանկյունից:

ՎԷ արտադրությունը կարող է տեղի ունենալ սեփական կարիքները բավարարելու և բիզնես շահերը բավարարելու համար: Ներկա իրավիրակում բիզնեսի հնարավորությունների մասին խոսելն ավելորդ է, քանի որ առքի սակագինը ցածր է: Այնուամենայնիվ, սեփական կարիքները բավարարելու համար ՎԷ արտադրությամբ բազմաթիվ համայնքներ հետաքրքրված են: Համապատասխան ներդրումային ծրագրերի և օրենսդրական դաշտի առկայության պարագայում համայնքները կարտադրեն ՎԷ:

Էներգետիկ կոոպերատիվների մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ համայնքները նույնպես առանձնահատուկ են, կա Երևանը, կան մարզային համայնքներ, սահմանամերձ համայնքներ:

Վիրտուալ նեթ-միթերինգը ներդնելիս անհրաժեշտ է վստահ լինել, որ այն չի ուղղվի մասնավոր շահերի բավարարմանը, այսինքն արտադրված էներգիան չի օգտագործվի, օրինակ, «մշակույթի տան դահլիճը վարձակալած մասնավոր ընկերության կողմից»: Նման վերահսկողության մեխանիզմներ օրենսդրորեն սահմանված են, քանի որ վարձակալ հանդիսացող մասնավոր ընկերությունը պարտավոր է ունենալ առանձին հաշվիչ:

## **Եզրակացություններ և առաջարկություններ**

Քննարկման ընթացքում մասնակիցների կողմից առաջարկվեց օրենսդրական բարեփոխումների փաթեթը մշակելիս հաշվի առնել

- ՀԷՑ – սպառումը կնվազի, պետք է էապես վերազինել ցանցային ենթակառուցվածքները;
- ավելի նպատակահարմար է վիրտուալ նեթ միթերինգը կազմակերպել էլեկտրաէներգետիկ շուկայի ազատականացման շրջանակներում;
- օրենսդրությամբ "սպառող" հասկացության վերանայում, քանի որ համայնքը դիտարկել որպես մեկ սպառող հակասում է գործող սահմանումներին;
- հարկային խնդիրները և ՀՀ ՊԵԿ-ի ներգրավման անհրաժեշտությունը բանակցային գործընթացներում;
- ՀՀ Ֆինանսների նախարարության ներգրավման անհրաժեշտությունը;
- Թե համայնքային ձեռնարկության սպառումը որտեղ է համայնքային, իսկ որտեղ է դառնում «արտադրություն», ստեղծելով մրցակցային խնդիր;
- Պիլոտի կամ մոդելի փորձարկման անհրաժեշտությունը;
- Հիմնական օրենքներում և փոխկապակցված իրավական ակտերում փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը;
- Էներգետիկ կոոպերատիվների ձևավորման նպատակով օրենսդրական բարեփոխումները իրականացնելիս հաշվի առնելով գյուղատնտեսական էներգետիկ կոոպերատիվների փորձը, մասնավորապես հարկային և հարկման խնդիրները և այլն:

ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Արտակ Մանուկյանը կարևորելով կռալիցիայի կողմից իրականացվող գործունեությունը, ինչպես նաև համայնքների համար առաջարկվող էլեկտրաէներգիայի փոխհոսքերի գործընթացի կատարելագործման անհրաժեշտությունը՝ թե՛ վիրտուալ փոխհոսքերի կարգավորման, թե՛ էներգետիկ կոոպերատիվների հիմնման եղանակով, պատրաստակամություն հայտնեց աջակցելու այդ առնչությամբ օրենսդրական բարեփոխումների գործընթացին:

Էներգետիկ կոոպերատիվների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտում բացթողումները լրացնելու նպատակով կողմերը համաձայնության եկան համագործակցել և առկա մասնագիտական ներուժը օգտագործել էներգետիկ կոոպերատիվների միջազգային փորձն ուսումնասիրելու և օրենսդրական առաջարկությունների փաթեթ մշակելու համար: